# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/146

«20» Մայիսի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի մայիսի 15-ի թիվ 13-Ա, որոշումը:

Առդիր՝ 27 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ փոստ dzoraget.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15 » Մայիսի 2019 թվականի N 13-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019-2023ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019-2023թվականների Զարգացման ծրագիրը:

| Կողմ ( 5 ) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. մայիսի 15

հ. Ձորագետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔ

# ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է Ձորագետ համայնքի ավագանու
2019թվականի մայիսի 15-ի թիվ 13-Ա որոշմամբ

ՁՈՐԱԳԵՏ 2019թ.

**Բովանդակություն**

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք........................................3

Համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար........................................3

Լուծման ուղիները........................................3

Ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացը........................................4

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ........................................4

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը........................................6

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ........................................8

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն........................................10

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում..11

3.1 Համայնքի զարգացման տեսլական........................................11

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ........................................12

4 ՀԶԾ ֆինանսավորում........................................12

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Սիրով ողջյունում եմ Ձորագետ համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ովքեր հետաքրքրված են Ձորագետ համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով:

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է ժ ամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականցնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկարգ և զարգացած համայնք:

### Համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար.

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից Ձորագետ համայնքի զարգացման ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

- Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Նոր աշխատատեղերի ստեղծում

*Համայնքի հիմնական պրոբլեմները*:

- Ներհամայնքային ճանապարհները և փողոցներ գտնվում են անմխիթար վիճակում:
- Հանայքի փողոցային լուսավորությունը
- Բնակչության 10 %-ը սոցիալապես անապահով են :

**Լուծման ուղիները**

*Օրենքների փոփոխություններ*

- *Լրացուցիչ ֆինանասական միջոցների ներկրում*
- *Աշխապատեղերի ստեղծում*
- *Իրավագիտական ծառայությունների մատուցում*
- *Գովազդ*
- *Հանարային մասնակցություն*
- *Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ*

Ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացը

Համայնքի զարգացման ծրագրի կազմման աշխատանքներին մասնակցել են , համայնքապետարանի աշխատակազմը: Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ զարգացման ծրագրում ընդգրկվելիք հարցերը քննարկվել են հանրային լսումներում, որին մասնակցել են մոտ 25 բնակիչ, ավագանու անդամները և աշխատակազմը: Հանրային լսումների ընթացքում լսվել է յուրաքանչյուրի առաջարկ և հնարավորության սահմաններում ընդգրկվել է զարգացման ծրագրի մեջ:

# ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 2 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ձորագետ համայնքը գտնվում է Լոռու մարզի հարավ-արևելյան մասում, Ձորագետ գետի հովտում: Գյուղը գտնվում է Վանաձոր-Ալավերդի Մ-6 միջպետական ճանապարհի վրա, որի հեռավորությունը մարզկենտրոնից 30 կմ է, պետական սահմանից ուղիղ գծով 65 կմ: Սահմանակից է Դսեղ, Եղեգնուտ, Ծաթեր Վահագնի համայնքներին: Համայնքով անցնում է Հարավ կավկասյան միջպետական նշանակության երկաթուղին: Ձորագետ համայնքի վարչական տարածքը կազմում է 213.07հա: Աշխարհագրական դիրքը լեռնային է, ծովի մակերևույթից գտնվում է 870 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է՝ հիմնականում կայուն ձյունածածկով, ամռանը զով, ձմռանը՝ ցրտաշունչ:: Համայնքը բաղկացած է երկու բնակավայրից, մեկը մյուսից գտնվում է 2 կմ հեռավորության վրա: Մի բնակավայրով հոսում է Փամբակ գետը, իսկ մյուսով՝ Ձորագետ գետը : Համայնքի ներսում հատվում են այդ երկու գետերը որտեղից էլ սկիզբ է առնում Դեբետ գետը, որի գետաբերանում 1932 թվականին կառուցվել և գործում է «Ձորագետի» ՀԷԿ-ը 26,4 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Յամայնքը ստեղծվել է 1924թվականին՝ Թումանյան կայարանի բազայի հիման վրա: Ձորագետ համայնքի նախկին անվանումը՝ եղել է Քոլագերան ավան, 1978 թվականին վերանվանվել է Ձորագետավան, 1996թվականին այն վերանվանվել է որպես Ձորագետ գյուղական համայնք: Համայնքում գյուղատնտեսական հողատարածքներ և արոտավայրեր չկան, որի պատճառով չի կարող զարգանալ գյուղատնտեսությունն ու անասնապահությունը: Դեբեդ գետի ափին՝ Կովկասյան լեռների անտառաշատ ու ժայռոտ փեշերին Ձորագետ համայնքում 2004թվականին կառուցվել և գործում է Թուֆենկյան հյուրանոցը, որն անվանել են ավան Ձորագետ հյուրանոց:
Ավան Ձորագետ հյուրանոցը գտնվում է ժայռերի միջով հոսող Դեբետ գետի ափին:Ավան Ձորագետ Հյուրանոցի հյուրերը հնարավորություն ունեն զմայլվելու Դեբեդ գետի վեհաշունչ տեսարաններով ու վայելելու հայկական հյուրասիրությունն ու լեռնաշխարհի անդորրը:

# ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 1.Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը | 250 |
| . տղամարդ | 115 |
| . կին | 135 |
| . նախադպրոցական տարիքի (0-5 տարեկան) | 9 |
| . դպրոցական տարիքի ( 6-17 տարեկան) | 33 |
| . միջին տարիքի (18-60 տարեկան) | 163 |
| . 60 տարեկանից բարձր | 45 |
| . ընտանիքների թիվը | 88 |
| . գրանցված ընտրողների թիվը | 186 |

## Բնակչության սոցիալական կազմը

| | | |
|---|---|---|
| 1. | Կենսաթոշակառուներ, որոնցից՝ | 57 |
| | հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի) | 2 |
| | միակողմանի ծնողազուրկ երեխաներ | - |
| | երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | - |
| | մանկուց հաշմանդամ երեխաներ | - |
| | միայնակ կենսաթոշակառուներ | 22 |
| | զոհված ազատամարտիկների ընտանիքներ | - |
| 2. | Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից ՝ | - |
| | ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի) | - |
| 3. | Փախստականներ (մարդ) | - |
| 4. | Բռնադատվածներ | - |
| 5. | Բազմազավակ ընտանիքներ (3 և ավելի անչափահաս երեխա ունեցող) | 3 |
| 6. | Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը (միջինը), այդ թվում՝ | 12 |
| | ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը | 11 |
| | հրատապ օգնություն և սոցիալական նպաստ ստացողների թիվը (միջինը) | 1 |

## 2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի բնակչության 10%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ նրանք բավարարված չեն աշխատանքով, և չունեն գյուղատնտեսական հող Վարձատրվող աշխատանքով ապահովված են մոտ 131 մարդ, հիմնականում կրթության, տեղական ինքնակառավարման մարմիններում, սպասարկման ոլորտում:

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 5874.8 հազ. դրամ, որից սեփական եկամուտները՝ 1629.2 հազ. դրամ, որը կազմում է բյուջեի ընդհանուր եկամուտների 27.7 %-ը:

- Համայնքը ունի 1 բուժ աշխատող սակայն չունի բուժ կետ:
- Համայնքում գործում է Թուֆենկյան հյուրանոցը որտեղ կա 50 աշխատող տարեկան սպասարկում է մոտավորապես 7000 այցելու:
- Համայնքում գործում է «Ձորագետ ՀԻդրո» ՍՊԸ որը ունի 45 աշխատող: Որի տարեկան եկամուտը կազմում է 1840000000 դրամ :

- Ընդհանուր հիմնական կրթությունն իրականացվում է Ձորագետի հիմնական դպրոցում: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով, 1 ուսուցչին ընկնում է մոտ 1 աշակերտ, աշակերտների թիվը կազմում է 17, իսկ աշխատողներինը՝ 14, որից ուսուցիչ՝ 33: Դպրոցը ապահովված է հիմնական գույքով, և համակարգիչներով ինֆորմատիկայի դասերը ընթանում են լիարժեք: Դպրոցը գազաֆիկացվա է, ջեռուցումը կատարվում է, Բաքսի համակարգով, ունի մշտական խմելու ջուր, ունի լոկալ կոյուղի:

Սովորողների թվաքանակը սակավ է , քանի որ համայնքից նկատվում է դպրոցականների արտահոսք Վանաձոր քաղաքի տարբեր դպրոցներ:

- Սոցիալական նպաստների համակարգում ընդգրկված են 12 ընտանիքներ, որից նպաստառու են 11 ընտանիք, հրատապ օգնություն և սոցիալական նպաստ են ստանում 1 ընտանիք,:

## 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքի բյուջեով նախատեսվել է բարեկարգել հանգստի գոտու մանկական խաղահրապարակի տարացքը և տեղադրել ճոճանակներ:
- Համայնքի ամենախոցելի կողմերից մեկը ճանապարհային տնտեսությունն է: Համայնքի բյուջեով նածատեսվել է իրականացնել ներհամայնքային ճանապարհների հարթեցման և փոսալցման աշխատանքներ:
- Համայնքի ամենախոցելի կողմերից մեկը լուսավորությունն է համայնքի բյուջեով նախատեսվել է իրականացնել փողոցային լուսավորությունը:
- Համայնքի ամենախոցելի կողմերից մեկը գերեզմանատան ցանկապատի կառուցումը և վերանորոգումը նախատեսվում է իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակում և համայնքի ներդրումներով: Հակառակ դեպքում հնարավոր է այլ դոնոր կազմակերպությունների ընդգրկում:

• Համայնքի ամենախոցելի կողմերից մեկը մշակույթի կենտրոնի վերանորոգումն է. որը նախատեսվում է իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակում և համայնքի ներդրումներով: Հակառակ դեպքում հնարավոր է այլ դոնոր կազմակերպությունների ընդգրկում:

• Համայնքի ամենախոցելի կողմերից մեկը բազմաբնակարան շենքերի աստիճանների և մուտքերի վերանարոգում նախատեսվում է իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակում և համայնքի ներդրումներով: Հակառակ դեպքում հնարավոր է այլ դոնոր կազմակերպությունների ընդգրկում:

## 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

### ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

| Հ/Հ | Եկամտի տեսակը | 2018թ. փաստ. | 2019թ. փաստ. | 2020թ. կանխա. | 2021թ. կանխա. | 2022թ. կանխա. | 2023թ. կանխա. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Եկամուտներ՝ Ընդամենը | 5340.1 | 5874.8 | 5914.8 | 5954.9 | 5995.3 | 6038.9 |
| 1 | Հարկային եկամուտներ՝ ընդամենը | 1577.2 | 1629.2 | 1669.2 | 1709.3 | 1749.7 | 1793.3 |
| 1.1 | Հողի հարկ | 60.0 | 53.9 | 53.9 | 53.9 | 53.9 | 53.9 |
| 1.2 | Գույքահարկ | 585.6 | 691.8 | 701.8 | 711.9 | 722.3 | 735.9 |
| 1.3 | Տեղական տուրքեր | 668.0 | 868.0 | 898.0 | 928.0 | 958.0 | 988.0 |
| 2 | Ոչ հարկային եկամուտներ | 263.6 | 15.5 | 15.5 | 15.5 | 15.5 | 15.5 |
| 2.1 | Հողի Վարձավճար | 15.5 | 15.5 | 15.5 | 15.5 | 15.5 | 15.5 |
| 2.2 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 248.1 | - | - | - | - | - |
| 3 | Դոտացիա Ֆինանսական համահարթեցում | 3762.9 | 4245.6 | 4245.6 | 4245.6 | 4245.6 | 4245.6 |

## ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

| Հ/Հ | Եկամտի տեսակը | 2018թ.՛ փաստ. | 2019թ. փաստ. | 2020թ. կանխա. | 2021թ. կանխա. | 2022թ. կանխա. | 2023թ. կանխա. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ | 1220.1 | 9997.7 | | | | |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 5254.8 | 6649.8 | 7349.8 | 8049.8 | 8749.8 | 9449.8 |
| 2 | Տնտեսական հարաբերություններ | -4034.7 | 1000.0 | 1200.0 | 1500.0 | 1700.0 | 2000.0 |
| 3 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | - | | | | | |
| 4 | Բնակարանային շինարարութ. և կոմունալ ծառայություն | - | 1822.9 | 2300.0 | 2500.0 | 2900.0 | 3100.0 |
| 5 | Հանգիստ, մշակույթ և կրոն | - | 500.0 | 530.0 | 590.0 | 650.0 | 700.0 |
| 6 | Սոցիալական պաշտպանվածություն | - | 25.0 | 50.0 | 100.0 | 150.0 | 200.0 |

Առաջիկա 5 տարիների ընթացքում կանխատեսվող եկամուտներից և ծախսերից բացի տարվում են աշխատանքներ հավելյալ եկամուտներ հայթայթելու և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու համար: Եկամուտներ կարելի է ստանալ միջազգային կամ դոնոր կազմակերպություններ ներգրավելու միջոցով:

## 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ձորագետ համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝
Համայնքի բնակչության 10%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.
Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,
- բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,
- ֆինանսական միջոցների բացակայությունը
- Ֆինանսական սղություն համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝
- համայնքի բնակավայրի գազաֆիկացման բացակայությունը

1) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

2) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը,կոմունալտնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

- .խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,
- Ֆինանսական միջոցների սղությունը,
- .փողոցային լուսավորության բացակայությունը:

3) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

- . ներհամայնքային ճանապարհների քայքայված վիճակը,

4) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

- .քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,
- .սեյսմիկ գոտում գտնվելը,
- .աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,
- .համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

5) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- հողաբաժնի պակասը,
- Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝
- .հեղեղատարների բացակայությունը,

6) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

- .գործարար միջավայրի բացակայությունը,
- .ձեռնարկությունների բացակայությունը,

7) .Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .երիտասարդների չամուսնանալը,
- .երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
- պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,
- պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

- .բնակչության իրազեկվածության պակասը,.բուժ-գործիքների պակասը,.նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը,.անվճար բուժ սպասարկման քիչ լինելը,.ջեռուցման բացակայությունը

9) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

10) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչըդոտող գործոններն են՝

- հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,

11) տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքի երիտասարդների կամավորության պակասը,
- .հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

## 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

| *Համայնքի ուժեղ կողմե* | *Համայնքի թույլ կողմեր* |
|---|---|
| • Համայնքի աշխարագրական դիրքը.<br>• Անտառներ<br>• Գետեր<br>• Արդյունաբերություն<br>• Հյուրանոցային համալիր առկայություն<br>• Հիմնական դպրոցի առկայություն.<br>• Գազաֆիկացման առկայություն<br>• Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հնություններ<br>• Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն | • Խմելու ջրի ներհամայքային ցանցի անմխիթար վիճակ<br>• Համայնքների փողոցների, ճանապարհների, մշակույթի շենքի անմխիթար վիճակը: Նյութատեխնիկական բազայի պակաս:<br>• Ծնելիության նվազում կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ: Բնակչության սոցիալ-տնտեսական վատթար վիճակը:<br>• Գյուղատնտեսական հողերի բացակայում:<br>• Սելավատարների անմխիթար վիճակը:<br>• Ֆինանսական ռեսուրսների բացակայություն<br>• Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ<br>• Վթարային շենքերի առկայություն |

| Հնարավորություններ | Սպառնալիքներ |
|---|---|
| • .Խմելու ջրի պաշարի առկայություն<br>• Տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրեր | • Տարերային աղետների վտանգ<br>• Իրավաբանական անձանց կողմից գույքահարկի և հողի հարկի ցածր գնահատված կադաստրային արժեքները:<br>• Անկատարար օրենսդրություն. Գնացքների բացակայություն: |

## 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 5%-ով աճի:
- Սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի իրականացում, համայնքի սեյսմիկ քարտեզի ստեղծում:
- Հանգստի գոտու բարեկարգում
- Ներհամայնքային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ:
  - Գերեզմանատան ցանկապատի կառուցում, վնասված ցանկապատի վերականգնում:
  - . Փողոցային լուսավորություն անցկացում:
  - Մշակույթի կենտրոնի վերանորոգում
  - Բազմաբնակարան շենքերի աստիճանների մուտքերի վերանարոգում;

## 3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Հանգստի գոտու տարածքի բարեկարգում:
Նպատակը՝ բարեկարգ մանկական խաղահրապարակ ունենալն է
2. Ներհամայնքային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքների իրականացում:
Նպատակը բարեկարգ համայնք ունենալն է երթևեկության անվտանգությունը և տեղաշարժման հեշտ լինելը:
3. Փողոցային լուսավորության անցկացումը :
Նպատակը՝ լուսավոր և անվտանգ փողոցներ ունենալն է:
4. Գերեզմանատան ց անկապատի կառուցումը և վերանորոգումը :
Նպատակը՝ գերեզմանատների պահպանություն
5. Մշակույթի կենտրոնի վերանորոգում:
Նպատակը՝ ակտիվացնել երիտասարդների մշակույթային և մարզական կյանքը
6. Բազմաբնակարան շենքերի աստիճանների և մուտքերի վերանարոգում:
Նպատակը՝ բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:

## ՀԶԾ ֆինանսավորում

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1. Հանգստի գոտու տարածքի բարեկարգում մանկական խաղահրապարակի գույքի ձեռքբերում նախատեսվում է իրականացնեկ համայնքի բյուջեի միջոցներով:
2. . Ներհամայնքային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքների իրականացում: նախատեսվում է իրականացնեկ համայնքի բյուջեի միջոցներով:
3. Փողոցային լուսավորության անցկացում նախատեսվում է իրականացնեկ համայնքի բյուջեի միջոցներով և Դոնոր կազմակերպության միջոցներով:
4. . Գերեզմանատան ցանկապատի կառուցումը և վերանորոգումը :
է նախատեսվում է իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակում և համայնքի ներդրումներով: Հակառակ դեպքում հնարավոր է այլ դոնոր կազմակերպությունների ընդգրկում:
5. Մշակույթի կենտրոնի վերանորոգում նախատեսվում է իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակում և համայնքի ներդրումներով: Հակառակ դեպքում հնարավոր է այլ դոնոր կազմակերպությունների ընդգրկում:
6. Բազմաբնակարան շենքերի աստիճանների և մուտքերի վերանարոգում նախատեսվում է իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակում և համայնքի ներդրումներով: Հակառակ դեպքում հնարավոր է այլ դոնոր կազմակերպությունների ընդգրկում:

## 5.ՀՀԶԾ-ի մոնիթորինգը

Իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը: Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագիրի նակատմամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների:

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐN1

## «ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Հանգստի գոտու վերանորոգման և գույքի ձեռք բերման դեպքում կլուծվի մանկական խաղահիրապարակի պահպանման հարցը: | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Բարեկարգ հանգստի գոտի | | | | | | |
| | Ցուցանիշներ Հանգստի գոտու վերանորոգում | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | 1.0մլն.դր. | 1.0մլն.դր | - | - | - | - |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | - | - | - | - | - | - |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | - | - | - | - | - | - |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. հանգստի գոտու վերանորոգում<br>1.2.<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.<br>2.2. | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 500.0 հազ. դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 500.0 հազ. դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 1.0մլն. դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.Ֆինանսական միջոցների առկայություն<br>2.Աշխատանքների կատարման պատրաստակամություն<br>3.Քարի, ավազի, խճի և ցեմենտի որոշակի քանակի առկայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցների հայթայթում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Ծրագրի հիմնական շահառու է համարվում ողջ համայնքը: | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2019-2019թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Մանկական խախահիրապարակի պահպանման համար անհրաժեշտ է կատարել, շինարարական աշխատանքներ 100մ երկարությամբ և 35մ լայնությամբ: Խաղահիրապարակի գույքի ձեռքբերում և տեղադրում:<br>Ծրագրի իրականացման արդյունքում Զորագետ համայնքը կունենա գեղեցիկ բարեկարգված հանգստի գոտի:<br>Ծրագրի ֆինանսավորման համար անրաժեշտ ֆինանսական միջոցների ներդրումը կիրանակացվի համայնքի բյուջեի միջոցների հաշվին և որոշակի աշխատանքներ կկատարվեն բնակիչների ուժերով; | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N2
# « ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ »

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքային ճանապարհի պահպանություն | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Բարեկարգ ճանապարհ | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | 1.0մլն.դր | 1.0մլն.դր | - | - | - | - |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ Ճանապարհի վերանորոգում | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | 1.0մլն.դր | 1.0մլն.դր | - | - | - | - |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | - | - | - | - | - | - |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. նախագծի պատվիրում<br>1.2. ֆինանսական միջոցների հայթայթում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. անհրաժեշտ նյութերի ձեռքբերում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 0.0<br>Կապիտալ ծախսեր՝ 1.0 մլն. դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 1.0 մլն. դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.Ֆինանսական միջոցների առկայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցների հայթայթում և բնական աղետները | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն, համայնք | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2019-2019թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքի մոտ 1կմ ճանապարհի հատվածը գտնվում է անմխիթար վիճակում,դժվարանցանելի է բնակիչների և տրանսպորտային միջոցների համար;Ճանապարհը բարեկարգելու համար նախատեսվում է կատարել գրունտային աշխատանքներ՝ փոսալցման, հարթեցման հողային, խճաքարային աշխատանքների տեսքով: Ծրագրի ֆինանսավորման համար անրաժեշտ ֆինանսական միջոցների ներդրումը կիրանակացվի համայնքի բյուջեի միջոցների հաշվի: Ծրագրի իրականացման արդյունքում Ձորագետ համայնքը կունենա բարեկարգված, հարթեցված ներհամայնքային ճանապարհ: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N3
# « ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի բնակավայրի կառուցապատումը և բարեկարգումը | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնք | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | 6.0 մլն. դր | 6.0 մլն. դր | 6.0 մլն. դր | - | - | - |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ Փողոցային լուսավորություն | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | 6.0 մլն. դր | 6.0 մլն. դր | 6.0 մլն. դր | - | - | - |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2019 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
| | | - | - | - | - | - | - |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Լուսամփոփների ձեռք բերում<br>1.2.հաղորդալարերի ձեռք բերում<br>1.3 հենասյուների ձեռք բերում<br>1.4 փողոցային լուսամփոփների տեղադրում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 1.0 մլն. դրամ<br>Կապիտալ ծախսեր՝5.0 մլն. դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 6.0 մլն. դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | 1.Ֆինանսական միջոցների առկայություն<br>2. Աշխատանքների կատարման պատրաստակամություն<br>3. Հենասյուների որոշակի քանակի առկայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | դրամական միջոցների հայթայթումը համայնքային բյուջե և դոնոր կազմակերպության ներգրավում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչություն, համայնք | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2019-2020թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ձորագետ համայնքը բաղկացած է երկու բնակավայրից, մեկը մյուսից գտնվում է 2կմ հեռավորության վրա,բնակավայրը որտեղ գտնվում է Թումֆենկյան հյուրանոցը, հյուրանոցի միջոցների հաշվին կատարվել է գիշերային լուսավորություն, իսկ մյուս համայնքը զուրկ է գիշերային լուսավորությունից: Ծրագրի իրականացման արդյունքում Ձորագետ համայնքում նախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ լուսավորված և գեղեցիկ համայնք: Ծրագրի ֆինանսավորման համար անրաժեշտ ֆինանսական միջոցները, հնարավոր չէ իրականացնել կամ կատարել միայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին, նախատեսվում է ֆինանսավորման համար դիմել կառավարությանը, կամ դիմել դոնոր կազմակերպություններին և բարեգործներին: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N4

## « ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td>Գերեզմանատան ցանկապատման դեպքում կլուծվի գերեզմանատան պահպանման հարցը:</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակ</td><td>
Գերեզմանատան պահպանում
<table>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2019</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td><td>2022</td><td>2023</td></tr>
<tr><td>-</td><td>-</td><td>-</td><td>2.2 մլն.դր</td><td>-</td><td>-</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td>
1.
<table>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ Գերեզմանատան ցանկապատում</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2019</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td><td>2022</td><td>2023</td></tr>
<tr><td>-</td><td>-</td><td>-</td><td>2.2 մլն.դր</td><td>-</td><td>-</td></tr>
</table>
2.
<table>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2019</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td><td>2022</td><td>2023</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td>-</td><td>-</td><td>-</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. պատնեշի կառուցում<br>1.2.<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.<br>2.2.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ընթացիկ ծախսեր՝ 0.0<br>Կապիտալ ծախսեր՝ 2.2.մլն. դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 2.2 մլն. դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td>1.Ֆինանսական միջոցների առկայություն<br>2.Աշխատանքների կատարման պատրաստակամություն<br>3. Ցանցի քարի, ավազի և ցեմենտի որոշակի քանակի առկայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>դրամական միջոցների հայթայթում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Ծրագրի հիմնական շահառու է համարվում ողջ համայնքը:</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td>2021-2021թթ.</td></tr>
